ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> հուլիսի 2022թ. N ՄՈ/417-2022

ք. Արմավիր

<<ԵՂԵԳՆՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հովհաննես Մարգարյանի 2022 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

որոշում եմ՝

1. <<Եղեգնուտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովհաննես Մարգարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 23-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հովհաննես Մարգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Եղեգնուտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Եղեգնուտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Եսթեր Դավթյանին:
3. 2022 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 23-ը ներառյալ <<Եղեգնուտի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Եսթեր Դավթյանի աշխատավարձի վճարումը իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Հովհաննես Մարգարյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

13.07.2022

X

VERIFIED OCSP 13.07.2022 17:27:36 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ